ԱՐՀՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԱՆՑՈՒԴԱՐՁ

ՀՈՒՆԻՍ 2024

#6

Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիա

Բովանդակություն

Ողջույնի խոսք

Աշխատանքի միջազգային կազմակերպության Աշխատանքի միջազգային համաժողով

Հանդիպումներ Աշխատանքի միջազգային համաժողովի շրջանակներում

Տեղի ունեցավ Արևելյան գործընկերության Քաղաքացիական հասարակության ֆորումի 5-րդ աշխատանքային խմբի հանդիպումը

Աշխատավայրում բռնության և ոտնձգության կանխարգելմանն ու վերացմանն ուղղված սեմինար

«Աշխատանքային խտրականության, բռնության և ոտնձգության վերացումը, ԱՄԿ C190» խորագրով կանանց համաժողով

Իրավունքների գլոբալ ինդեքս 2024

Բարի գալուստ,
«Արհմիութենական անցուդարձ» ամսագիր

«Արհմիութենական անցուդարձ» ամսագիրը հանդիսանում է Հայաստանում արհմիութենական առաջին էլեկտրոնային ամսագիրը, որի նպատակն է տարածել և հանրահռչակել Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի (ՀԱՄԿ) կողմից յուրաքանչյուր ամսվա ընթացքում կատարած աշխատանքների մասին տեղեկատվությունը: Արհմիութենական առօրյան հարուստ է բազմազան միջոցառումներով, ծրագրերով, որոնք ուղղված են աշխատողների իրազեկմանը, աշխատանքային և դրա հետ կապված սոցիալական, տնտեսական, մասնագիտական իրավունքների ներկայացմանը, պաշտպանմանը և առաջ մղմանը:

Մենք վստահ ենք՝ այսօր ժամանակակից աշխարհում ամենազորեղ զենքը գիտելիքն է և տեղեկտավության տարածումը:

Հայաստանի արհմիությունների
կոնֆեդերացիայի աշխատակազմ

Աշխատանքի միջազգային կազմակերպության Աշխատանքի միջազգային համաժողով

2024 թվականի հունիսի 3-ից 14-ը Շվեյցարիայի Ժնև քաղաքում տեղի է ունեցել Աշխատանքի միջազգային կազմակերպության Աշխատանքի միջազգային համաժողովի 112-րդ նստաշրջանը: Այդ օրերին ԱՄԿ անդամ 187 երկրների կառավարությունները, արհմիություններն ու գործատուները քննարկել են Աշխատանքի հիմնարար սկզբունքներին, իրավունքներին, կլիմայի փոփոխության և կենսաբանական վտանգների առկայության պայմաններում աշխատողների պաշտպանությանը, տնտեսությունների առողջացմանն ուղղված հարցեր:

Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի նախագահ Էլեն Մանասերյանը հունիսի 11-ից 14-ը մասնակցել է Համաժողովի աշխատանքներին ՀՀ պատվիրակության կազմում:

Այցի շրջանակներում Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի նախագահ Էլեն Մանասերյանը հանդիպում է ունեցել Աշխատանքի միջազգային կազմակերպության տնօրեն Ժիլբերտ Հունգբոյի հետ:
Հանդիպման ընթացքում Մանասերյանը ներկայացրել է ՀԱՄԿ-ի կողմից իրականացվող աշխատանքների զարգացումները և բարձր է գնահատել ԱՄԿ-ի աջակցությունը Հայաստանում արհմիութենական շարժմանը:
Է.Մանասերյանն ընդգծել է Սոցիալական արդարության կոալիցիային՝ ՀԱՄԿ-ի մասնակցությունը և դրա կարևորությունը սոցիալական գործընկերության կայացման համար:
Նա նաև նշել է ներկայումս Հայաստանում եռակողմ կոլեկտիվ պայմանագրի բացակայության մասին, հույս հայտնել, որ շուտով այս բացը կլրացվի:
Տիկին Մանասերյանը շնորհակալություն է հայտնել ԱՄԿ-ին Արցախից բռնի տեղահանված անձանց աջակցություն ցուցաբերելու և ՀԱՄԿ-ի կողքին մշտապես լինելու կապակցությամբ:
Իր հերթին Ժիլբերտ Հունգբոն կարևորել է Հայաստանում սոցիակալան գործընկերության կայացումը, ինչպես նաև կիսվել իր դրական տպավորությամբ ՀԱՄԿ կատարած իր այցելության վերաբերյալ: Հանդիպման ավարտին կողմերը հաստատեցին աշխատանքների շարունակականությունը, ինչպես նաև նոր ծրագրերի իրականացումը:

Հանդիպումներ Աշխատանքի միջազգային համաժողովի շրջանակներում

Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի (ՀԱՄԿ) նախագահ Էլեն Մանասերյանն Աշխատանքի միջազգային համաժողովի շրջանակներում մի շարք հանդիպումներ է ունեցել Աշխատանքի միջազգային կազմակերպության Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանային գրասենյակի ղեկավար Բեատա Անդրեսի հետ: Քննարկվել են ապագայում ՀԱՄԿ-ի հետ իրականացվելիք ծրագրերը:

ՀԱՄԿ-ի նախագահ Էլեն Մանասերյանն Աշխատանքի միջազգային համաժողովի շրջանակներում հանդիպել է նաև ԱՄԿ աշխատողների հարցերով բյուրոյի տնօրեն Մարիա Հելենա Անդրեյի և Բյուրոյի Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանային համակարգող Սերգեյուս Գլովացկասի հետ: Հանդիպման ընթացքում կողմերը քննարկեցին արդեն իսկ ԱՄԿ ծրագրերի շրջանակներում իրականացված ծրագրերը: Էլեն Մանասերյանը ներկայացրել է արհմիությունների կողմից վերջին շրջանում իրականացված աշխատանքները, ընդգծել ԱՄԿ աջակցությունը հատկապես բռնի տեղահանված անձանց: Անդրադարձ է կատարվել նաև ոչ ֆորմալ տնտեսությունում աշխատողների կազմակերպմանն ուղղված ծրագրերին: Մարիա Հելենա Անդրեն ողջունել է արձանագրված արդյունքները և դրական գնահատել աշխատանքների շարունակականությունը:

Տեղի ունեցավ Արևելյան գործընկերության Քաղաքացիական հասարակության ֆորումի 5-րդ աշխատանքային խմբի հանդիպումը

2024 թվականի հունիսի 18-19-ը տեղի ունեցավ Արևելյան գործընկերության Քաղաքացիական հասարակության ֆորումի 5-րդ աշխատանքային խմբի՝ «Սոցիալական և աշխատանքային քաղաքականություններ, սոցիալական երկխոսություն» առցանց հանդիպումը, որին մասնակցում էին Հայաստանի, Ադրբեջանի, Բելառուսի, Վրաստանի, Մոլդովայի, Ուկրաինայի և Եվրամիության Արևելյան գործընկերության Քաղաքացիական հասարակության ֆորումի 5-րդ աշխատանքային խմբի անդամները:

Արևելյան գործընկերության Քաղաքացիական հասարակության ֆորումի 5-րդ աշխատանքային խմբի անդամների ձայների մեծամասնությամբ Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի նախագահ Էլեն Մանասերյանն ընտրվեց Արևելյան գործընկերության Քաղաքացիական հասարակության ֆորումի 5-րդ աշխատանքային խմբի համակարգող:

Հանդիպման ընթացքում ուրվագծվեցին Արևելյան գործընկերության Քաղաքացիական հասարակության ֆորումի 5-րդ աշխատանքային խմբի առաջիկա երկու տարիների գործունեության առաջնահերթությունները:

2024 թվականի հունիսի 15-ին Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիան ընտրվել էր նաև Արևելյան գործընկերության Քաղաքացիական հասարակության Հայաստանի ազգային պլատֆորմի 5-րդ աշխատանքային խմբի համակարգող:

Աշխատավայրում բռնության և ոտնձգության կանխարգելմանն ու վերացմանն ուղղված սեմինար

Աշխատանքի միջազգային կազմակերպության «Միասին նպաստենք Հայաստանում աշխատանքային իրավունքների իրացմանը» ծրագրի շրջանակներում ս.թ. հունիսի 21-ին Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայում տեղի ունեցավ Աշխատավայրում բռնության և ոտնձգության կանխարգելմանն ու վերացմանն ուղղված սեմինար, որին ներկա էին ՀԱՄԿ-ի աշխատանքային հարաբերություններում հավասարության հարցերով հանձնաժողովի անդամները և այլ հյուրեր:

Աշխատաժողովը վարում էր ԱՄԿ խորհրդատու Հելենա Պերեսը, ով մասնակիցների հետ կիսվեց ԱՄԿ 190 կոնվենցիայի արդիականությամբ, Բռնության և ոտնձգության դեմ արդյունավետ համակարգի ներդրմանն ուղղված հավանական քայլերի կիրառման մեթոդաբանությամբ:

Ողջույնի խոսքով հանդես եկավ ՀԱՄԿ-ի նախագահի տեղակալ Տիրուհի Նազարեթյանը, ով իր խոսքում նշեց ԱՄԿ 190 կովենցիայի վավերացման կարևորությունը՝ ի նպաստ հայաստանյան աշխատաշուկայում առավել արժանապատիվ աշխատանքային միջավայրի կայացման:

«Աշխատանքային խտրականության, բռնության և ոտնձգության վերացումը, ԱՄԿ C190» խորագրով կանանց համաժողով

Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիան «Սոլիդարիթի Սենթր» կազմակերպության հայաստանյան ներկայացուցչության հետ համագործակցության շրջանակներում 2024 թվականի հունիսի 22-23-ը կազմակերպել է «Աշխատանքային խտրականության, բռնության և ոտնձգության վերացումը, ԱՄԿ C190» խորագրով կանանց համաժողով:

Համաժողովի ընթացքում մասնակիցներն ծանոթացել են ԱՄԿ թիվ 190 կոնվենցիային, քննարկել և վերլուծել են աշխատանքային խտրականության տեսակները և դեպքերը: Քննարկվել է նաև արհմիությունների դերը աշխատանքային հարաբերություններում հավասարության համար բանակցային գործընթացում:

Իրավունքների գլոբալ ինդեքս
2024

Արհմիությունների միջազգային կոնֆեդերացիան 2024 թվականի հունիսին հրապարակել է Իրավունքների գլոբալ ինդեքսը, որը կարևոր զեկույց է ամբողջ աշխարհում ժողովրդավարության հիմնական սկզբունքների՝ աշխատողների և արհեստակցական միությունների հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության և իրականացման համար պայքարի իրավիճակի մասին:

Արհմիությունների միջազգային կոնֆեդերացիան փաստում է կառավարությունների և գործատուների կողմից միջազգայնորեն ճանաչված կոլեկտիվ աշխատանքային իրավունքների խախտումները, մասնավորապես՝ միավորման ազատության, կոլեկտիվ բանակցությունների և գործադուլի իրավունքի:

Այս տարի Իրավունքների գլոբալ ինդեքսում Հայաստանի Հանրապետության դիրքը չի փոփոխվել և շարունակում է գտնվել «3» գործակից ունեցող պետությունների շարքում, որտեղ գործատուները միջամտում են արհմիությունների ընտրություններին, ստեղծվում են դեղին արհմիություններ՝ աշխատողների անկախ ներկայացուցչությունը խոչընդոտելու նպատակով, ինչպես նաև ազգային օրենքներով անհամաչափ սահմանափակվում է գործադուլի իրավունքը:

Զեկույցին կարող եք ծանոթանալ՝ հետևելով հղմանը

https://www.ituc-csi.org/IMG/pdf/2024_ituc_global_rights_index_en.pdf

Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիա
Հասցե՝ Վազգեն Սարգսյան 26/3
Հեռ.՝ +37410 583682
www.hamk.am
hamk@hamk.am